Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

Ե. Չարենցի անվան գրականության և
արվեստի թանգարան
Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարան

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԵՐԵՎԱՆ
«ԱՆՏԱՐԵՍ»

ՀՏԴ 821.19-3Դեմիրճյան
ԳՄԴ 84(5Հ)-4
Դ 353

Հրատարակության պատրաստեց
Կարինե Ռաֆայելյանը
Խմբագիր՝ *Կարո Վարդանյան (բ.գ.թ.)*

Դեմիրճյան Դերենիկ
Դ353 Դատողություններ Ղարաբաղի և
Նախիջևանի հարցի շուրջ: / Դերենիկ
Դեմիրճյան.- Եր.: Անտարես, 2016.– 32 էջ:

Խոհագրությունը ներկայացնում է Դ. Դեմիրճյանի մտահոգություններն ու ստեղծված ծանր կացությունից հնարավոր ելքերի փնտրտուքը՝ Ղարաբաղի, Նախիջևանի, Ախալքալաքի և առհասարակ ողջ հայության ճակատագրի առնչությամբ:

Առանձին գրքով տպագրվում է առաջին անգամ:

ISBN 978-9939-51-917-3

© «Անտարես», 2016
© Դ. Դեմիրճյանի տուն-թանգարան 2016

Նորահայտ ձեռագրի մասին

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող Դերենիկ Դեմիրճյանի ֆոնդում անհրաժեշտ նյութի հերթական փնտրտուքի ժամանակ մեզ համար անսպասելի գտանք 24 էջից բաղկացած մի ձեռագիր, որը Դերենիկ Դեմիրճյանի արխիվի Լրացուցիչ մասն ամփոփող գրանցամատյանում զետեղված էր «Հոդվածներ, ելույթներ և զանազան գրառումներ» բաժնում՝ «Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ իր դատողությունները. սևագրություններ» նկարագրությամբ: Առաջին հայացքից անծանոթ այդ ձեռագիրը մեզ մղեց նոր փնտրտուքների: Թեև վստահ էինք, որ նման նյութ երբևէ չի հանդիպել ո՛չ գրողի երկերի ակադեմիական հրատարակության 14 հատորում, ո՛չ պարբերական մամուլում, այնուամենայնիվ, ևս մեկ անգամ

թերթեցինք Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանում, ԳԱԹ-ում և Հայաստանի ազգային գրադարանում պահպանվող գրքերն ու պարբերականները, հարցուփորձ արեցինք տարբեր գրականագետների և համոզվեցինք, որ ձեռագիրն իսկապես անտիպ է:

Այս նյութը վկայությունն է այն անհերքելի ճշմարտության, որ յուրաքանչյուր իսկական մտավորական նախ և առաջ իր հայրենիքի, իր ազգի մտահոգությունների, ցավերի, իհարկե նաև՝ ձեռքբերումների ու հաղթանակների կրողն է:

Ձեռագրի կազմին Դեմիրճյանը կատարել է հետևյալ գրառումը. «Ամենօրյա խառն նոթեր /Ավելի՝ լեզվական/»: Եվ միայն ներքևում ռուսերեն ավելացրել է՝ *Карабаг*:

Դերենիկ Դեմիրճյանի նման զգուշավոր, շրջահայաց մարդը, միանգամայն հասկանալի է, որ պիտի խուսափեր խոսուն վերնագրից, ինչն իսկույն կմատներ այդ գրառումների բուն էությունը, քանզի 1950-ականների կեսերից սկսված «ձնհալի» պայմաններում անգամ փոքր չէր համապատասխան գերատեսչությունների ուշադրության կենտրոնում հայտնվելու վտանգը:

Թեև ձեռագիրը ստույգ տարեթիվ չի կրում, սակայն մենք հակված ենք մտածել, որ այն գրվել է

1954 թվականին: Ձեռագրի վերջում՝ տետրի կազմի վրա, հիշատակված են 1954-ին լույս տեսած որոշ թերթերի անուններ և հրապարակումներ, որոնցում անդրադարձ կա Ուկրաինայի՝ Ռուսաստանի հետ վերամիավորման 300-ամյակին: Ծանոթանալով նշված հրապարակումների բովանդակությանը և Ղարաբաղի, Նախիջևանի ու Հայաստանի ճակատագրի հետ դրանցում առկա ակնհայտ առնչություններին՝ համոզվում ենք, որ Դեմիրճյանը փորձել է մատնացույց անել այս երկու սլավոնական ժողովուրդների վերամիավորման փաստը՝ դրանով ընդգծելով համանման հնարավորության կիրառումը նաև հայ ժողովրդի և նրա պատմական հայրենիքի համար՝ այդուհանդերձ չխախտելով խորհրդային գաղափարախոսության և կարգախոսների ընդունված սահմանները: Բացի այս, Ղարաբաղի և հայության ճակատագրին առնչվող գրառումներ կան նաև գրողի երկերի ակադեմիական հրատարակության 14-րդ հատորում՝ «Օրագրերում»՝ արված 1954 թվականի մարտի 12-ին և 1955-ի մարտի 11-ին: Այս փաստերը վկայում են, որ սկսվել էին քիչ թե շատ բարենպաստ ժամանակներ, երբ կարելի էր եթե ոչ բարձրաձայն, ապա գոնե կիսաձայն խոսել մեր ազգային խնդիրների մասին: Հետևաբար,

Դեմիրճյանը հենց այդ ժամանակահատվածում պիտի վճռեր թղթին հանձնել իրեն այնքան անհանգստացնող խոհերը:

Ներկայացվող ձեռագրում մենք պահպանել ենք հեղինակի շեշտադրումներն այս կամ այն բառի, արտահայտության վրա, ռուսալեզու գրառումներն ու կետադրական նշանները: Առանձին ենթաբաժնով հրատարակել ենք նաև Դեմիրճյանի այն գրառումները, որոնք դուրս են մնացել ընդհանուր շարադրանքից և արվել են առանձին թերթիկների վրա, բուն շարադրանքի դարձերեսին կամ լուսանցքներում:

Անընթեռնելի մեկ-երկու բառի տեղում դրված է համապատասխան նշանը՝ < >:

Կարծում ենք, որ այս նյութն առավել լիարժեք կդարձնի հայ գրասերների պատկերացումները մեծ դասականի մասին, և նոր լույս կսփռի Արցախի չարչրկված թնջուկի մանրամասների վրա:

Ներկայացվող նյութն առաջին անգամ տպագրվել է «Հայկազեան հայագիտական հանդէս» տարեգրքում 2014 թվականին

Կարինե Ռաֆայելյան
Դերենիկ Դեմիրճյանի
փուն-թանգարանի վարիչ

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ի՞նչ բան է «*Ղարաբաղը*»:

Սա մի հարց է, որին պետք է պատասխանել: Հասարակ հարց կարելի է համարել, հարցնել և պատասխանել:

Երևի Ղարաբաղը գոյություն չուներ՝ իբրև *հարց* (ո՛չ՝ պրոբլեմ, այլ *հարց, հարցմունք*):

Այսինքն՝ մինչև 1918 թիվը: Դա ցարական պետության մեջ գտնվող մի շրջան էր, ուր ապրում էին բնակչության համարյա հարյուր տոկոսը կազմող հայեր: Դա, ըստ տերիտորիալ, էթնիկ փաստի, հայերինն էր:

Հարցը հետո՝ 18 թվին ստեղծվեց: Ո՞վ ստեղծեց:

Տաճիկ հրամանատարությունը՝ Բաքու արշավելու նախօրյակին: Նա Ալեքսանդրապոլում կարգադրեց Խատիսովին, որ Ղարաբաղը մտնի Ադրբեջանի սիստեմի մեջ:

Ինչո՞ւ՝ *անպատճառ* Ադրբեջանի սիստեմի մեջ. ի՞նչ «особый заказ» էր: Հասարակ պատասխան. դա տաճկական հրամանատարությանը *պետք էր*:

1) Երբ կատարվեց տաճկական հրամանատարության *հրամանը*, կատարվեց Տաճկաստանի նույն պահի, ասենք, ժամանակավոր պլանը: Ի՞նչ: Ասենք՝ չգիտենք:

2) Երբ արդեն սովետականացվել էր Անդրկովկասը, և Նարիմանովը հայտարարեց, որ Ղարաբաղը վերադարձվում է Հայաստանին, ինչո՞ւ տաճկական կառավարությունը արգելք դրեց: Ասենք՝ ժամանակավոր պլանը դեռ մնում էր: Տաճկաստանի ցուցմունքն ընդունվեց. Ղարաբաղին ձեռք չտվեցին: Ինչո՞ւ: Ասենք՝ Ղարաբաղը պետք էր Տաճկաստանի 1918-ի պլանին: Ուրեմն պլանը ժամանակավոր չէր կամ երկարացվեց:

Եվ այժմ, որ իբրև չպիտի ձեռք տրվի Ղարաբաղին, կնշանակի պիտի մնա

«ժամանակավոր պլանը»: Դա պետք է Տաճկաստանին:

Եզրակացություն: Ղարաբաղը տաճկական զակազ է. ժամանակավոր չէ, այլ մշտական, և ով պաշտպանում է Ղարաբաղի ներկա ստատուսը, նա պաշտպանում է 18 թվի ստատուսը: Նա ընդունում է տաճկական օրիենտացիան: «Նա»-ն այստեղ պետք է համարել նրան, ով պաշտպանում է, ով գիտի և ընդունում է, որ դա տաճկական օրիենտացիա է: Թող հրապարակ գա այդ «նա»-ն և բարձրաձայն հայտարարի: Չի՞ հայտարարում *բարձրաձայն*: Միևնույն է. «նա» *ցածրաձայն* ընդունում է *տաճկական օրիենտացիան*: Որովհետև տրամաբանությունը տանում է այդտեղ՝ իր երկաթե ուժով:

Այո՛, ընդունում է, հանդուրժում է, ենթարկվում է՝ հաճությամբ, զիջելով, ստիպված:

Կարո՞ղ է մի պլան վնասակար լինել տանողին և պաշտպանվել նրա կողմից: Ո՛չ: Ուրեմն Ղարաբաղի պլանը օգտակար է և պաշտպանվում է: Բաց անենք քարտերը. Ղարաբաղը պետք է Տաճկաստանին և Ադրբեջանին: Հետևապես այդ օրիենտացիան պետք է: Իսկ եթե պետք չէ, թող

վերականգնվի հին ստատուսը՝ էթնիկական Ղարաբաղը միանա իր էթնիկական ազգակցին՝ Հայաստանին: Դա են պահանջում Սովետական իդեոլոգիան, լենինիզմը և պրոլետարարությունը:

Ով դեմ է, կողմնակից է տաճկական օրիենտացիային:

Կարելի՞ է այժմյան պայմաններում պահանջել Ղարաբաղը: Ո՛չ՝ կասեն: Ե՞րբ կարելի կլինի: Երբ իրենք՝ ադրբեջանցիները կամենան: Ե՞րբ կկամենան: Երբե՛ք: Ուրեմն՝ *այս օրս* նույնարժեք է, ինչ որ *երբևէն:*

Կարելի՞ է այնպես անել, որ հոժարությամբ վերադարձնեն Ղարաբաղը: Այո՛, եթե Ղարաբաղի պաշտպանները՝ մուսաֆաթիստները, վերանան և առաջ գան լենինիստները:

Կլինի՞ այդ: *Ես չգիտեմ*:

Ղեկավարությունը (Շահումյան, Ֆիոլետով, Ազիզբեկով, Ջափարիձե և մնացածները) Բաքվում ստեղծեց այնպիսի *փրադիցիա*, որ Բաքուն դարձրեց բոլշևիզմի *միջնաբերդը* Անդրկովկասում: Եվ թեպետ վեց ամսվա հերոսական դիմադրության վերջում պարտվեց Բաքուն, բայց նրա ստեղծած *փրադիցիան* հիմք դարձավ Հյուսիսային Կովկասից

Բաքու արշավող բոլշևիկյան զորամասերի համար՝ մտնելու Բաքու և *սպիպելու մուսաֆաթական զորքին չդիմադրել*:

Փաստ է, որ Բաքվի բանվորության մեծամասնությունը հայեր էին, Բաքվում հավաքվել էին գերմանական և ավստրիական ճակատներից տուն վերադարձած հայ (մեծ մասամբ՝ գյուղացի) զինվորները: Եվ (չնկատված (!) փաստ) Ղարաբաղի գյուղացիների հաղթական դիմադրությունները տաճկական կանոնավոր զորամասերին թուլացնում էին Բաքու գնացող տաճիկ զորամասերի պաշտպանական ուժը:

Չնկատված է մնացել մի շատ կարևոր փաստ. Բաքվի հետ միասին *Ղարաբաղի հայ ժողովուրդը ևս ռուսական օրիենտացիա ուներ*: Փաստ է, որ նրանք չկամեցան միանալ դաշնակցական Հայաստանին, որի օրիենտացիան անգլո-ամերիկյան էր: Այնպես որ, վերոհիշյալ երկու փաստը պետք է գնահատել հետևյալ կերպ. *Բաքվի հետ միաժամանակ ռուսական օրիենտացիա է ունեցել նաև Ղարաբաղը*. նա անգնահատելի ծառայություն է մատուցել Բաքվին և ռուսական գաղափարին. նախ՝ կռվելով տաճիկների

դեմ իր լեռներում և երկրորդ՝ չի միացել դաշնակցական ավանտյուրային և հարել է *ռուսների գործին*, որով և չի թուլացրել ռուսական գործը Անդրկովկասում, *այլ ուժ է տվել*: (поддержка): Եվ սրանից հետո պետք է այլևս ասել՝ *Բաքու-Ղարաբաղի դիմադրություն: Կավելացնեի նաև՝ Զանգեզուրի*:

Ծանոթություն. Ահա, թե ինչ նշանակություն ուներ և ունի Ղարաբաղը տաճիկ զորահրամանատարության աչքում: Ղարաբաղը եղել և մնում է իբրև աչքի փուշ Տաճկաստանի համար: Դեռ Անդրկովկասի դռների մոտ դեպի Բաքու արշավանքը ծրագրող տաճիկ հրամանատարությունը ճիշտ հասկացավ ու բարձր գնահատեց Ղարաբաղի այդ ռազմաքաղաքական նշանակությունը: (Փոքրկովկասյան լեռնաշղթայի միջնաբերդ, կռվող (հայ) ժողովուրդ՝ ռուսական հին օրիենտացիայի ստեղծողը և հավատարիմ պահողը): Ալեքպոլի դաշնակցությամբ Ղարաբաղը հանվեց Հայաստանից և կցվեց Ադրբեջանին: Քեմալական Թյուրքիան դիմադրեց 22 (?)-ին Նարիմանովի «առաջարկին»՝ Ղարաբաղը վերադարձնել Հայաստանին:

Ինչո՞ւ չվերադարձնել Հայաստանին: Ինչո՞ւ հանձնել Ադրբեջանին: Ի՞նչ ապագա նպատակների համար: Ինչո՞ւ էր և է հոգում, որ Ղարաբաղը մնա Ադրբեջանի ձեռքում: Ինչո՞ւ է վստահում նրան…

Հարցեր, հարցեր և հարցեր, որոնց պատասխանը շատ պարզ է նրանց համար, ովքեր չեն վախենում տրամաբանությունից:

Իմիջիայլոց, տաճիկները նոր չէ, որ մեծապես գնահատում են Ղարաբաղը: Նրանք շատ են արշավել Ղարաբաղ և շատ են «կերել» նրանից: Ղարաբաղը Զանգեզուրի թիկունքն է տաճիկների համար. Զանգեզուրի, որի դռները չկարողացան կոտրել տաճիկները ո՛չ պատմության մեջ, ո՛չ 18 թվին, Զանգեզուրի, որին կարող են տիրել՝ թիկունքից հարվածով:

Ո՞վ պիտի հարվածի… Նա մի հարվածող ունի, հնարավոր մի ագրեսոր. դա Տաճկաստանն է:

Մի հանգամանք ևս պետք է նշել և ընդգծել: Տաճկական կառավարությունը բնաջնջեց իր պետության մեջ ապրող հայությանը: Եթե իր «պատիժը» վերագրում էր իրեն հպատակ հայերին, ապա ինչո՞ւ կոտորեց

Ախալքալաքի, Լենինականի, Շիրակի, Փամբակի, Բաքվի հայությանը: Ինչո՞ւ է մտադրվել բնաջնջել նաև Անդրկովկասում: Ի՞նչ պլան էր Անդրկովկասի հայերի բնաջնջումը, որ ծրագրեց Վեհիբ փաշան՝ 1918-ի գարնանը:

Թյուրքերը հարձակվեցին Անդրկովկասի վրա: Ծրագիրն էր՝ տիրել այն մինչև Բաքու-Դերբենտ և իրենց ենթարկել Անդրկովկասի ժողովուրդներին: Նրանք հարվածի օբյեկտ ընտրեցին հայ ժողովրդին, որի բնաջնջումը սկսված էր Թյուրքիայում և ծրագրվում էր ավարտել Անդրկովկասում: Հարվածը տրվեց Հայաստանի գծով՝ Լենինական-Կիրովական-Դիլիջան-Աղստաֆա:

Թյուրքերին դիմադրեց (*ուրեմն*) հայ ժողովուրդը: Նրան օգնության չհասան մենշևիկները և մուսաֆաթը, և հայ ժողովուրդը սրանց, *հասկանալիորեն*, չի մեղադրում: Քանի որ հայ ժողովրդի թշնամիների մեջ էին և՛ մենշևիզմը, և՛ մուսաֆաթը: Սրանք բարեկամ չէին նաև դաշնակցության, որ անշուշտ, չի նշանակում, թե դաշնակցությունը հայ ժողովրդի բարեկամն էր:

Ղարաբաղը և Նախիջևանը տաճկական ռազմաքաղաքական պլան է կամ էր:

Ով պաշտպանում է Ղարաբաղն ու Նախիջևանը Ադրբեջանում թողնելու ստատուսը, նա գիտակցաբար, թե անգիտակցաբար պաշտպանում է այդ պլանը:

Այդ երկրամասերը Հայաստանին վերադարձնելու ուղղությամբ քայլեր եղել են (Նարիմանովը և ուրիշները), բայց վերջը հարցը ճնշվել է և լքվել: Ի՞նչն է եղել դրա արգումենտը. երևի՝ «վիրավորանք» հասցնելը Ադրբեջանի ժողովրդին: *Հարց*: Ի՞նչ է նշանակում այդ «վիրավորանքը» սովետական սոցիալիստական պետությունների սիստեմում՝ Միությունում, եթե ճիշտ է, որ նա գնում է դեպի կոմունիզմ, և եթե ճիշտ է, որ այս կոմունիզմը պոլիտիկա չէ, մանյովր չէ, «ագիտացիա» չէ, պրոֆանացիա չէ, այլ ճշմարիտ մարքս-լենինյան ուսմունքի և քաղաքական պլանի արդյունք, և սա՝ անկեղծ, անվերապահ, աներկմիտ և ազնիվ:

Ի՞նչ վիրավորանք հայերի համար, եթե Աջարիան միացրած է Վրաստանին: Ի՞նչ վիրավորանք վրացիների համար, եթե Ղարաբաղն ու Նախիջևանը միանան Հայաստանին: Ի՞նչ վիրավորանք հայերի համար, եթե պարսկական Ադրբեջանը միացվեր Ադրբեջանին:

Ի՞նչ վիրավորանք կլինի Ադրբեջանի համար, եթե Ղարաբաղն ու Նախիջևանը վերադարձվեն Հայաստանին: *Նրանց ինչի՞ն են պետք Ղարաբաղը և Նախիջևանը*:

Եվ ի՞նչ են ներկայացնում Ղարաբաղն ու Նախիջևանը Ադրբեջանում. երիտասարդությունը չի կարող բարձրագույն կրթություն ստանալ իր մայրենի լեզվով. ուրեմն և չի կարող Ադրբեջանում մասնակցել *որակյալ աշխատանքի՝ իր իսկ բուն մարզում*: Ղարաբաղի ժողովուրդը մնում է կիսակիրթ. գյուղացին հետ է մնում: Նա պետք է ադրբեջանականանա, որ կարողանա ապրել և զարգանալ: Ուրեմն ասիմիլիացիա՛… և այն էլ ինչպիսի՛…

Ղարաբաղը և Նախիջևանը Թյուրքիայի ագրեսիայի սիմվոլներն են Արևելքի նկատմամբ. նրա պլացդարմը: Պաշտպանո՞ւմ է Ադրբեջանը այդ պլանը: Եթե ոչ, այդ դեպքում ի՞նչ վիրավորանք, եթե բանակցության ժամանակ հաշվի չառնվի այդ հին պլանը:

Թերևս հարկ կա սահմանավորելո՞ւ հայերի պահանջը: Սահմանավորվել էին իրենց ներկա սահմանում, բայց ինչո՞ւ փորձեցին և սկսեցին հայերի թիվը պակասեցնել:

Ես վստահ եմ, որ ինչքան էլ հայերը սեղմվեն, չի դադարելու ճնշումը, չի դրվելու սահման նրանց «սահմանավորման»: Նրանց կճնշեն մինչև բնաջնջում: Հայերը պետք չեն մուսաֆթական, մենշևիկյան, ինչպես նաև թյուրքական որևէ պլանի, այլ խանգարում են նրանց՝ իբրև ռուսական հենասյուն, և նրանք կռվում են ոչ «հայերի» դեմ, այլ «ռուսների» դեմ Անդրկովկասում:

Ավելի ուժեղ հենասյուն կստեղծվեր Ղարաբաղի, Նախիջևանի և Հայաստանի միացումից. այսինքն՝ ավելի ուժեղ հենասյուն կստեղծվեր ռուսական օրիենտացիայի համար Անդրկովկասում: Չէ՞ որ այն ժամանակ, երբ ռուս զորքերը հեռացան Անդրկովկասից (1918թ.), Բաքուն, Ղարաբաղը և Նախիջևանը (ժողովուրդը) պաշտպանեցին ռուսական օրիենտացիան, որով և մեծապես օգնեցին ռուսական ռևոլյուցիային (բոլշևիկներին, «ռուսներին»): Եվ եթե այն ժամանակ, այն պայմաններում դա կարողացան, ուրեմն որքա՛ն կարող են ներկա պայմաններում, երբ Անդրկովկասում ավելի ուժեղացել է *հայ, վրացի և ադրբեջանցի բուն ժողովուրդների* համակրանքը դեպի *ռուս ժողովուրդը*:

1918-21-ի դեպքերի ծավալը չէ, որ մեծ է: Չնչին է այն խոշոր դեպքերի համեմատությամբ, որ տեղի ունեցան Ռուսաստանում: Նրանք ծավալուն են իրենց քաղաքական (ներքին և արտաքին) նշանակությամբ: Դրանք համակովկասյան ծավալ ունեցան: Այդտեղ գործում էին անգլո-տաճկական ագրեսիան և ինտերվենցիան, որ նպատակ ունեին գրավել Կովկասը, համեստ դեպքում՝ Անդրկովկասը: Դրա զոհը եղավ (և կլինի ավելի չարաբախտորեն) հայ ժողովուրդը, որը *միայնակ կանգնեց տաճկական զորքերի դեմ Էրզրումից մինչև Բաքու*:

Ի՞նչ պետք է եզրակացնել սրանից: Ի՞նչ անել: Պետք է սրանից եզրակացնել, որ խնդիրը մեր շահագրգռությունը չէ, որ շահագրգռությունը, խնդիրը միայն հայկական չէ, այլ Միության շահագրգռությունն է Անդրկովկասում: Այդ շահագրգռությունը, որ թվում է, թե իրոք մերն է, ստացվել է պատմականորեն: (Ռուսական օրիենտացիա, տաճկական թշնամություն: Կարելի է ավելացնել՝ վրացական և ադրբեջանական թշնամություն):

Իհարկե, առանձին ուսումնասիրության հարց է, թե իրո՞ք գոյություն ունի այս

վրացական և ադրբեջանական թշնամությունը՝ ընդդեմ հայերի, և ովքե՞ր են դրա կրողները: Ժողովուրդնե՞րը, թե՞ դրանց ինտելիգենցիան (քաղաքական ինտելիգենցիան): Սա կարևոր է, բայց ավելի կարևորն այն է, թե որքա՞ն վճռական դեր կարող է խաղալ դրանցից այս կամ այն խավը: Անդրկովկասը ռազմաքաղաքական «աքացինեերի» վայր է: Անդրկովկասն անգլո-տաճկական քաղաքական և ռազմական ագրեսիայի վայր է: Անդրկովկասը մի անգամ՝ 1918-ին, բաժանվել է Ռուսաստանից: Անդրկովկասում երեք քաղաքական բուրժուական կուսակցություններ՝ մենշևիկյան, մուսաֆաթական և դաշնակցական, Անգլիայի, Ամերիկայի, Գերմանիայի (Եվրոպայի) օրիենտացիա են ունեցել: Անդրկովկասում երեք ժողովուրդներ քաղաքական (տարբեր թեև) հաշիվներ են ունեցել Տաճկաստանի (իմա՝ Անգլիայի, Ամերիկայի, Գերմանիայի) հետ: Կապեր և կոնֆլիկտներ են առաջացել Տաճկաստանի, Անգլիայի, Ռուսաստանի հետ: Հայերը կռիվներ են վարել տաճիկների դեմ: Վրացիները և ադրբեջանցիները կապեր են հաստատել Տաճկաստանի հետ: Այնպես որ,

«կուսական» վայր չէ Անդրկովկասը, անգամ՝ Կովկասը:

Սրա հիման վրա կարող ենք դեռ ավելի առաջ գնալ մեր անալիզի մեջ: Այսինքն՝ փաստ է, որ վերջին հարյուր տարվա մեջ միայն հայերն են, որ տաճիկների դեմ կռվել են՝ Զեյթունից, Սասունից, Էրզրումից սկսած, մինչև Բաքու: Իսկ 17-րդ դարից սկսած՝ հատուկ կռիվներ են ունեցել հայերը տաճիկների դեմ Զանգեզուրում և Ղարաբաղում: Եթե պատմությունը հանգիստ թողնե՞նք՝ իբրև *«վաղեմություն»*, որ կարելի է «մոռանալ», իբրև մի «տեսական» ֆակտոր՝ նոր, կենդանի հարաբերությունների ֆակտորի դիմաց և, ուրեմն, անարժեք կատեգորիաներ՝ 1915-ի Հայկական Ջարդը, Աքսորը, կռիվները՝ Էրզրումից մինչև Սարդարապատ, Ապարան, Ղարաքիլիսա և ապա Ղարաբաղ, Բաքվի պատերի տակ վեց ամիս տևող կռիվները: Այս ամենը հայտածելով այն ֆակտորի կողքին, որ ո՛չ վրացիները և ո՛չ ադրբեջանցիները տաճիկների հետ այս հարյուր տարվա ընթացքում ընդհարում չեն ունեցել, ավելացնենք և այն ֆակտորը, որ Անդրկովկասի երեք գլխավոր ժողովուրդներից միայն

հայերն են, որ ռուսական նախկին կայսրության մեջ ապրում էին երկու պետության մեջ, իսկ վրացիները և ադրբեջանցիները՝ միայն մի պետության մեջ, որ միայն հայերն էին, որ տաճիկների հետ *արյան պատմություն* ունեին, իսկ վրացի և ադրբեջանցի ազնվականությունը՝ *բարեկամական կապեր*: Այս բոլորը բացահայտ ցույց են տալիս, որ Անդրկովկասի ժողովուրդները՝ իրար կողքի, Տաճկաստանի դեմ կանգնած են հիմնավորապես տարբեր դիրքավորման մեջ: Նրանց կենդանի պատմությունը իրար վերաբերմամբ հակառակ ուղղություն է ունեցել մինչև 1920-21 թիվը: Այս թվերին Անդրկովկասը մտավ այս րոպեի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության սիստեմի մեջ, որով և երեք ժողովուրդներն իրենց պատմությամբ մտան այնպիսի մի բոլորովին նոր վիճակի մեջ, որ պետք է վերջանային այդ երեքի պատմությունները:

Վերջացա՞ն, թե՞ շարունակվեցին:

Դաշնակցության ձեռքը Ռաֆֆի և Պատկանյան տալը եղավ Բաքվից՝ Ամիրխանյանի ձեռքով: Հարությունյանի ղեկավարության ժամանակ մեզ հարվածել են մեր

ձեռքով: Հետո մենք ևս անգիտակցաբար հարվածել ենք ինքներս մեզ (*դժգոհ մասսա մեր դեմ՝* Ղարաբաղը, Նախիջևանը, Ախալքալաքը)՝ գցելով այս դժգոհ մասսան դաշնակցության ձեռքը: Տնտեսական հարվածները ավելի խորացրին այս վտանգավոր դժգոհությունը:

Հենց 18 թվից անգլիացիները, մուսաֆաթիստները *համառորեն* Նախիջևանն ու Ղարարաբաղը գցում էին Ադրբեջանի *սիստեմի մեջ*: Նրանք ստեղծեցին մի պահի ասած «պատմական տրադիցիա», հոգեբանության և վաղեմության նման մի բան, որի վրա պնդելով՝ ամրացրին այն կարծիքը, որ այս երկրամասերը *Ադրբեջանինը* պիտի լինեն և մնան Ադրբեջանի սիստեմի մեջ: Դրան ավելացրին նաև վախը և լռությունը այս հարցերը շարժողների դեմ:

Լենինականում և Ախալքալաքում երևաց այն խաբեբայությունը, որով Քեմալական Թյուրքիան վարում էր սովետների հանդեպ իր վարքագիծը: Չեկիստ (անունը մոռացել եմ) գրում է հուշեր իր՝ Լենինականում

եղած ժամանակի, դեպքերի մասին (գտնել նրան): Պատերազմի մեջ երևաց, թե ինչ բարեկամ է Թյուրքիան մեզ համար. նույնը և՝ ներկայում:

Անգլոթյուրքական ագրեսիան այժմ արտահայտվում է իդեոլոգիական «< >» մեթոդով: Թյուրքիան ուզում է նոր քեմալական ներկայացում տալ, երբ մենք հաղթենք Ամերիկային: Թյուրքիայի մի նոր վտանգման ժամանակ Ն. Հիքմեթը, Մ. Իբրահիմովը պրոբլեմներ են: Հիշենք. 22 (?), Բաքվի թյուրք «բոլշևիկները», 20-ի վերջերում «բոլշևիկ» սպաների արշավանքը Ղարաբաղի և Զանգեզուրի վրայով դեպի Թյուրքիա՝ «պրոպագանդ» անելու, որոնք լավ «պրոպագանդ» արին Ղարաբաղում…

(Թյուրքիայի «կոնստիտուցիոնալ» օրիենտացիան, վիճակը է մշտական պայքար Ռուսաստանի դեմ):

Նոր ֆակտորներ Սովետական Հայաստանում՝ գաղութահայությունը և նոր հայրենազրկությունը: Հարկավոր է զրկել դաշնակցությանն այս հարցին մասնակցելու հնարավորությունից, որով և կարող է սնվել նա: Սա մեր Սովետական Սոցիալիստական

Միության *ներքին հարցն* է, որ ոչ ոքի չենք զիջի: Սովետական հայրենասիրությունը ամենահաստատ և կազմակերպիչ ուժն է մեր պետության: Ահա *դրան* էին խփում... նացիոնալիզմի զրպարտանքով

Նկատելի է, որ Թիֆլիսը ճնշեց և խեղդեց բոլշևիկների ելույթներն ու ապստամբության փորձը, իսկ Բաքուն՝ չկարողացավ: (Թիֆլիսը՝ մենշևիկները, Բաքուն՝ մուսաֆաթիստները):

«Կարողանալու», «չկարողանալու» փաստերը ես դնում եմ խիստ կարևորությամբ: Դա ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար 1918-20 թվերին և խիստ կարևորություն է ներկայացնում նաև *այժմ*... քանի որ բոլշևիզմի ներկայությունն ու բացակայությունը Անդրկովկասում ունեցավ և ունի ճակատագրական նշանակություն հայ ժողովրդի համար: Դա ուներ և ունի նշանակություն Անդրկովկասի մնացած երկու ժողովուրդների համար *ևս*: Դա ճիշտ է՝ միայն որոշակի սահմաններում, մինչդեռ հայ ժողովրդի համար՝ բացառիկ, վերին աստիճանի արտակարգ: Ամենևին մտադիր չլինելով

տենդենցիոզ ու անճիշտ գաղափար կազմել տալ վրացի ու ադրբեջանցի ժողովուրդների՝ դեպի բոլշևիզմը տածած համակրանքի հարցում՝ ես հարուցում եմ ժողովուրդների *օրիենտացիայի ուժի կարողության* հարցը: Որքա՞ն *կարող էին և կարողացան ադրբեջանական և վրացական ժողովուրդները պահել բոլշևիզմը Անդրկովկասում, երբ ռուսական զորքն ամբողջովին անցավ Կովկասյան լեռնաշղթայի այն կողմը*:

Ես նայում եմ մերկ փաստին: Նրանք *չկարողացան*, թեև, ասենք, *կամեցան* (այսինքն՝ նրանց մեջ եղած բոլշևիկները և բոլշևիկացած տարրերը):

Հայ ժողովուրդը միայն կամեցավ և որոշ չափով *կարողացավ*: Կարողացավ՝ Բաքվում: Բաքվում կազմելով զգալի ուժ՝ կարողացավ, ռուս (թուլացած) բոլշևիկների և ադրբեջանական (նույնպես թույլ) բոլշևիկների գլուխ անցած, պաշտպանել Բաքուն տաճիկների հարձակումից *վեց ամիս*: Բաքվի այս բռունցքը՝ կոմունարների *(այստեղ ձեռագիրն ընհատվում է- Կ. Ռ.)*:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

(Արվել են ընդհանուր շարադրանքից դուրս, առանձին թերթիկների վրա - Կ.Ռ.)

***

Վասակը անկախությունը, ազատությունը և < > ուզում է *իր համար*, ինքն է անկախը:

Հայերի վիճակը արտակարգ է և բացառիկ: Այդ արտակարգությունը ստեղծել են նրա թշնամիները: Հայերն էլ, ի վերջո, նպաստել են դրան:

Այդ հայերն են. ի՞նչ օգնություն կարող են ցույց տալ մեզ մեր երկու հարևանները նեղ օրում, երբ ռուսական զորամասերը քաշվեն ռազմական անելանելիության հետևանքով: 1) Փոքր նահանջի ժամանակ՝ ապաստարան. 2) Մեծ նահանջի ժամանակ, տաճիկ զորքի առաջխաղացման ժամանակ

Այս… *(այստեղ ձեռագիրն ընհատվում է- Կ. Ռ.)*:

***

Հայաստանի պոտենցիալը, ֆակտորները, նշանակության առանձնահատկությունը:

Բաքվում վարկաբեկեցին սովետական իշխանությունը, պրոֆանացիայի ենթարկեցին բոլոր քաղաքական, տնտեսական արժեքները:

«Մի՛ դիմեք ռուսներին, նրանք ձեզ ոչինչ չեն տա, բացի ձեզ զոհի նացիա դարձնելուց»:

***

1) Անդրկովկասի, ավելի ճիշտ՝ Կովկասի սովետական սոցիալիստական գործին մեծ հարված է տրված Բերիայի և Բագիրովի դավաճանական գործունեությամբ:

2) Ոչ թե Հայաստանի պաշտպանություն (ծիծաղելի կլինի տանել միայն Հայաստանի պաշտպանություն), *այլ՝ Փոքր Կովկասի,* այլ՝ Անդրկովկասի, և ապա՝ Կովկասի պաշտպանություն, Բաքվինն էլ:

Հարց. Ամբողջ Կովկասը պետք է կանգնի Բաքվի պաշտպանության համար:

3) Մենք *երկու անգամ ռուսներին բերինք* (օժանդակեցինք) Անդրկովկաս.

ա) Պյոտր 1-ինին և բ) բոլշևիկներին՝ Բաքու: Այսուհետև պետք է *երրորդ անգամ բերենք ռուսական գաղափարը (օրիենտացիան)*, որ թուլացել է:

- Մեզ առանձնացրին և իրենք էլ մեզնից առանձնացան: Ապա թե ոչ՝ ինչո՞ւ Ղարաբաղի և Հայաստանի միջև խցկեցին «Քուրդիստանը»: Ինչո՞ւ Գանձակի և Սևանի միջև խցկեցին նորաշեն ադրբեջանական գյուղերը: Ինչո՞ւ խրեցին «երզնկյանական» սեպը Արփաչայի ակունքների ուղղությամբ:

- Ինչո՞ւ չէին նպաստում ռուսական օրիենտացիայի ուժեղացմանը և դեմոնստրատիվ արտահայտում այդ, որ Թյուրքիան փակի իր ախորժակը: Մուսաֆաթն ու մենշևիզմը թյուրքական օրիենտացիա ունեն, ինչպես նաև դաշնակները: Բայց Հայաստանի մեջ թյուրքական օրիենտացիա չկա: Մեզ առանձնացրին՝ մի կերպ, իրենք առանձնացան՝ մի այլ կերպ. և առաջին իսկ օրից. Զանգեզուրի, Ղարաբաղի, Սևանի, Լենինականի և Արաքսի սահմանագծերը:

Ամբողջ տրագեդիան այն է, որ մի կողմից մեզ լռեցնում են ավելի և ավելի, մյուս կողմից այնպիսի պրովոկացիաներ են անում, որ մենք պոռթկանք, անհավասարակշիռ ելույթներ ունենանք, ավելի և ավելի ընկնենք ծայրահեղությունների մեջ (Հռիփսիմեն, Մաշտոցը, Կարսը), և մեզ մեղադրեն *նացիոնալիզմի* մեջ այն ժամանակ, երբ մենք ստիպված ենք լինում ցուցադրել մեր *պատրիոտիզմը*:

Առհասարակ *չգրված մի օրենք* է դարձել, *չպայմանավորված համաձայնություն* միշտ հայերի պատրիոտիզմը դարձնել մեղադրանք՝ նացիոնալիզմ:

Հայ կուլտուրայի որևէ երևույթը նշելը, վեր հանելը, հայ ժողովրդի որևէ պատմական կամ ներկայի առավելությունը, հայերեն խոսելու ցանկությունը և այլն որակվել է որպես նացիոնալիզմ:

Ոչ մի լենինյան դրույթ, որ հայ ժողովրդի *համար ևս* գոյություն ունի կարծես. հայերի դեպքում նացիոնալիզմ է: Ղարաբաղի պահանջը, Նախիջևանի պահանջը, Ախալքալաքի համար որևէ դրության պահանջը միշտ համարվել է *նացիոնալիզմ*:

Ե. Չարենցի անվան գրականության և
արվեստի թանգարան
Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարան

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Խմբագիր՝ Կարո Վարդանյան
Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Կազմը՝ «Անտարես» մեդիա հոլդինգի

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am